ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

28.01.2012թ գ. Դարանակ

Տեղի ունեցավ Գեղարքունիքի մարզի Դարանակ համայնքի ընդհանուր ժողովը :

Ժողովին մասնակցում էին համայնքի բնակիչները, ավագանու անդամները և Գեղարքունիքի մարզպետարանի ներկայացուցիչ՝ Ն. Ղազարյանը ժողովի նախագահ համայնքի ղեկավարի տեղակալ Շ. Գրիգորյան:

Ժողովի քարտուղար՝ Ա. Իվանյան

ՕՐԱԿԱՐԳ - Դարանակ համայնքի ղեկավար Վ. Սարկիսյանի հաշվետվությունը 2011թ. կատարված աշխատանքների մասին:

ԶԵԿՈՒՅՈՂԸ – մանրամասը ներկայացրեց Դարանակ համայնքում 2011թ. ընթացքում կատարած աշխատանքների մասին հաշվետվությունը:

Հաշվետվությունը վեր հանվեց համայնքի սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման ուղղությամբ համայնքի ղեկավարի և գյուղապետարանի աշխատակազմի կողմից ձեռնարկված միջոցառումները, ինչպես նաև համայնքի բյուջեի կատարման, այնպես էլ համայնքում առկա խնդիրների լուծման ուղղությամբ (համայնքի ղեկավարի հաշվետվությունը կցվում է) հաշվետվության շուրջ ծավալված մտքերի փոխանակության մասնակիցներին համայնքի ավագանին և բնակիչները, հաշվետվության շուրջ հանդես եկավ մարզպետարանի ներկայացուցիչը:

Համայնքի բնակչության կողմից առաջարկվեց համայնքի ղեկավար Վ. Սարկիսյանի կողմից կատարված աշխատանքները գնահատել բավարար:

Համայնքի ընդհանուր ժողովը՝

ՈՐՈՇԵՑ՝

1. Համայնքի ղեկավար Վ. ՍԱրկիսյանի 2011թ. կատարած ախատանքների վերաբերյալ տրված հաշվետվությունները գնահատել բավարար:

2. Պահանջները համայնքի ղեկավար Վ. Սարկիսյանի և գյուղապետարանի աշխատակազմի 2012թ. ընթացքում իրենց գործունեությունը նպատակաուղղել համայնքում առկա հիմնախնդիրների լուծման և համայնքի բյուջեի սեփական եկամուտները հավաքագրման ամբողջական կատարմանը և այդ մասին պարբերաբար իրազեկ պահել համայնքի ավագանուն և բնակչությանը: